«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2023

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Արտադասարանական ընթերցանության կազմակերպումը մայրենիի դասերին

ԱՌԱՐԿԱ - Հայոց լեզու, գրականություն, մայրենի

ՀԵՂԻՆԱԿ - Արմինե Գաբրիելյան

ՄԱՐԶ - Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ- Ս. Բյուրատի անվան հ. 125 հիմնական դպրոց

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ - Անահիտ Զոհրաբյան

Երևան 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Ներածություն** ..... 2

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ ..... 5

**ԳԼՈՒԽ 1. Արտադասարանական ընթերցանության ուսուցմանը ներկայացվող ընդհանուր պահանջները** ..... 7

**ԳԼՈՒԽ 2. Արտադասարանական ընթերցանության ուսուցման դասի նմուշ-օրինակ** ..... 8

**Եզրակացություն** ..... 15

**Օգտագործված գրականություն** ..... 17

# Ներածություն

Մեզ՝ մայրենիի, հայոց լեզվի և գրականության ուսուցիչներիս, մեծ պատասխանատվություն է տրված՝ դաստիարակելու և կրթելու աճող սերնդին՝ նրանց մեջ սերմանելով հայրենասիրություն, բարություն, հանդուրժողականություն, մարդասիրություն, ընկերասիրություն, ծնողասիրություն, պատվախնդրություն, բարոյականություն, ազգասիրություն, վեհանձնություն...

Հարկ է հիշել, որ այդ պատասխանատվությունը շատ մեծ է, դրա համար էլ սխալվելու կամ անզգույշ լինելու իրավունք չունենք: Ես ՝Արմինե Գաբրիելյանս, խոր ըմբռնումով եմ մոտենում այս հարցին և իմ աշխատանքային գործունեությամբ նպաստում եմ աճող սերնդին կրթելու և դաստիարակելու գործին:

Ժամանակակից դպրոցականը համացանցի տեղեկատվական տիրույթում անցկացնում է բավականին երկար ժամանակ: Դա, անկասկած, նպաստում է նրա տեղեկատվական կարողունակության զարգացմանը. երեխան, յուրացնելով նորը, ընդլայնում է իր հաղորդակցության շրջանակները, ծանոթանում է տարբեր կարծիքների, ձեռք է բերում տեղեկատվությունը համեմատելու և գնահատելու կարողություններ: Բայց չափազանց հասանելիությունը ամենատարբեր, այդ թվում՝ երեխայի գիտակցության վրա ոչ միշտ է բարենպաստ ազդեցություն թողնում: Տեղեկատվությունները, երեխաների կողմից յուրացվող գիտելիքների ու արժեքների միջև հակասությունը, որը ձեռք է բերվում դպրոցում (համակարգվածություն, հետևողականություն, ավանդականություն, մշակութային համապատասխանություն և այլն) և դպրոցից դուրս (մտածողության հատվածականություն, քաոսայնություն, բարձր և ցածրակարգ մշակույթների շփոթ, մշակութային և հակամշակութային սահմանների ջնջում), փոխում է երեխաների մտածողության կառուցվածքը, նրանց ինքնագիտակցումը և աշխարհընկալումը, հանգեցնում է խառնաշփոթի: Այո՛, փաստ է, որ օրեցօր տեխնոլոգիական նորանոր նվաճումներով զարգացող աշխարհում երեխաները գտնում են իրենց հետաքրքրությունները համացանցում, և ընթերցանությունը մղվում է երկրորդ պլան: Մենք՝ ուսուցիչներս, պետք է կարողանանք

ուղղորդել աշակերտներին համացանցում տարբեր զբաղմունքների, էլեկտրոնային խաղերի փոխարեն էլեկտրոնային գրքեր ընթերցել և այդ նպատակով կարելի է հետաքրքիր նախագծեր մշակել, որ հեռախոսին գամված երեխան խաղա ընթերցելով կամ ընթերցելով խաղա: Արդյունավետ դաստիարակչական գործընթաց կազմակերպելու համար անհրաժեշտ է իմանալ ժամանակակից երեխաների հետաքրքրությունները[1]: Վաղուց հայտնի է, որ հասարակության ինտելեկտուալ ու տնտեսական ներուժը կախված է նրանից, թե ինչպիսի գրականություն են կարդում երիտասարդները: Միջին դպրոցի ավագ դասարանի աշակերտներից շատերը իմ կատարած հետազոտության ընթացքում նշել են, որ իրենց ազատ ժամանակ դժվարություններ չեն ունենում ընթերցանության համար գրականություն ընտրելու հարցում: Հիմնականում բախվում ենք միջին դասարանների աշակերտների ընթերցանության խնդրին, որը կապված է շրջապատող աշխարհը ճանաչելու և անհատի ինքնաճանաչումը զարգացնելու միջոցների հետ: Ահա այս նպատակով պետք է կարևորել արտադասարանական ընթերցանության դերը, կազմակերպել դասեր տարբեր եղանակներով, մեթոդական հնարներով և ապահովել աշակերտի գործուն մասնակցությունը, հետաքրքրվածությունը, մտածական գործընթացների խթանումը: Դա անելու համար անհրաժեշտ է ձևավորել ընթերցողի կոմպետենտությունը, ինչով էլ պայմանավորված է իմ աշխատանքի արդիականությունը: Այս աշխատանքի նպատակն է աշակերտներին ծանոթացնել հայ և համաշխարհային գրականության հարստություններին, զարգացնել գրական ստեղծագործությունն ու դրանցում արտացոլված կյանքի երևույթները ընկալելու և գնահատելու կարողությունը և դրա հիման վրա ձևավորել գեղարվեստական ճաշակ, գեղագիտական կարիքներ, դպրոցականների քաղաքացիական գաղափարական ու բարոյական դիրքորոշումը. Այս նպատակին հասնելը ներառում է.

- հայրենական և համաշխարհային գրականության նշանավոր ստեղծագործությունների ընթերցում և ուսումնասիրություն
- դպրոցականների գեղարվեստական արժեքների ինքնուրույն զարգացումն ապահովող գիտելիքների և հմտությունների ձևավորում.

[1] Սովորողների հետաքրքրության շրջանակը պարզելու համար կարելի է կիրառել Մասլուոի բուրգ գործիքը:

- Դպրոցականների գեղարվեստական և ստեղծագործական կարողությունների, երևակայության, գեղագիտական զգացողության զարգացում, նրանց հուզական և ինտելեկտուալ արձագանքման կրթություն արվեստի գործերի ընկալման մեջ
- գրագետ և սահուն գրական խոսքի հմտությունների զարգացում

Այս աշխատանքի շնորհիվ ընկալվում է ստեղծագործությունը, որը ձևավորում է մարդու ընդհանուր մշակույթը, նրա գրագիտությունը, հաղորդակցվելու կարողությունը և հուզական կուլտուրան:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է՝

ցույց տալ, որ արտադասարանական ընթերցանությունը նպաստում է տվյալ թեմայի հետ կապված գիտելիքների ձևավորմանն ու համակարգմանը, անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, անձի զարգացմանը, որպեսզի դասը հետաքրքրական, ուսանելի ու դաստիարակչական դառնա: Միջառարկայական կապերի ստեղծման միջոցով աշակերտների մոտ կզարգանան քննադատական և ստեղծագործական կարողությունները: Կդրսևորեն ճանաչողական, վերացարկման, մտահանգման, դիտարկման, երևույթների նկատմամբ հետաքրքրություն և քննադատական մոտեցում, կհամագործակցեն ընկերների հետ, կլսեն խոսակցին, կաշխատեն ընդհանուր նյութերով, կզարգացնեն գեղագիտական ճաշակ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝

• տեսական ու գործնական ի՞նչ մոտեցումներ են առկա թեմայի վերաբերյալ

• ինչպե՞ս միջառարկայական կապերն օգտագործելու միջոցով տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքները միավորել մեկ ընդհանուր համակարգի մեջ,ամրապնդել և կիրառել

• ինչպե՞ս արտադասարանական ընթերցանության նյութն օգտագործելու միջոցով անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապեր ստեղծել

• ինչպե՞ս զարգացնել քննադատական և ստեղծագործական կարողություններ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Այսօր հանրակրթական դպրոցի կարևորագույն հիմնախնդիրներից մեկն այն է, որ ուսուցումը լինի աշակերտակենտրոն, այսինքն՝ աշակերտը հանդես գա ոչ թե որպես օբյեկտ, այլ որպես սուբյեկտ: Ուսուցիչը, տարբեր մեթոդներ գործադրելով, պետք է բարձրացնի աշակերտի գործունությունը դասերին, ոգևորի պասիվ երեխաներին: Նա պետք է աշակերտներին տրամաբանելու և ստեղծագործելու հնարավորություն տա: Այստեղ նրան օգնության են գալիս ուսուցման և արտաուսումնական աշխատանքների ընթացքում իրականացվող միջառարկայական կապերը: Երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող»[2]: Նյութի մշակման ժամանակ, երբ աշակերտների ընթերցած այս կամ այն հատվածի շուրջ որոշակի բացատրություններ են տրվում ուսուցչի և աշակերտների կողմից, կարելի է համանման փաստեր բերել նաև արդեն անցած նյութերից, համեմատություններ, հակադրություններ ու զուգահեռներ անցկացնել՝ միտքն ավելի պարզ, գաղափարներն ու հասկացություններն ավելի մատչելի դարձնելու համար: Այսպիսի օժանդակ կամ լրացուցիչ փաստարկումներ աշակերտներից պետք է պահանջել նաև նրանց պատասխանելու ժամանակ, որը շատ կարևոր է ոչ միայն նյութը խոր յուրացնելու, այլև ինքնուրույն եզրակացությունների հանգելու կարողություն մշակելու տեսակետից: Ամփոփման ժամանակ լայնորեն կարելի է դիմել միջառարկայական կապերի օգտագործմանը՝ կատարելով ազատ դատողություններ՝վառանց հիմնականից շեղվելու, որովհետև այդ դեպքում ընդհանուրը նկատի ունենք և ոչ թե կոնկրետ նյութը: Գրական երկն ուսումնասիրելու գործընթացում ուսուցիչը ձևավորում է անհրաժեշտ առարկայական իրավասությունները:

[2] Յ. Ա. Կոմենսկի, Մեծ դիդակտիկա

Անվանենք առարկայական իրավասությունները, որոնք ուսուցիչը պետք է ձևավորի ընթերցանության նյութի յուրացման գործընթացում.

-ստեղծագործության բառը, տեքստը, լեզուն հասկանալու կարողություն

- տեքստը կարդալու, գրվածը համարժեք հասկանալու ունակություն

- երկխոսության մեջ մտնելու ունակություն

- հարցեր տալու ունակություն

- հեղինակի դիրքորոշումը որոշելու ունակություն

- սեփական դիրքորոշումը ձևակերպելու և այն արտահայտելու կարողություն

- մենախոսություն, երկխոսություն կազմակերպելու ունակություն

- եզրույթներ օգտագործելու ունակություն

- գեղարվեստական միջոցների գործառական նպատակը որոշելու ունակություն

-միջառարկայական կապերը տեսնելու կարողություն

5-6-րդ դասարաններում աշակերտները մտնում են գրական աշխարհ, հասնում են էրուդիցիայի որոշակի մակարդակի, ինչը նրանց թույլ է տալիս առաջին տեսական ընդհանրացումները կատարել կերպարների, կերպարների պատկերման առանձնահատկությունների և նրանց միջավայրի մասին, կատարել դիտարկումներ լեզվի վերաբերյալ, աշխատել, կատարել բանավոր և գրավոր աշխատանք:

# ԳԼՈՒԽ 1. Արտադասարանական ընթերցանության ուսուցմանը ներկայացվող ընդհանուր պահանջները

Ելնելով կրթական համակարգում <<Մայրենի>> առարկայի առանձնահատուկ դերից ու նշանակությունից՝ արտադասարանական ընթերցանությունը ներկայացնում է ընդհանուր կրթադաստիարակչական բնույթի հետևյալ պահանջները.

1. սովորողի ընդհանուր զարգացման և բարեկրթության մակարդակի բարձրացում
2. աշակերտների ստեղծագործական մտածողության, իմացական ակտիվության և ինքնուրույնության զարգացում
3. գիտելիքներն ինքնուրույնաբար համալրելու կարողություն, դրանք ձեռք բերելու նախաձեռնողական վերաբերմունքի ձևավորում
4. միջառարկայական կապերի ապահովում
5. գրքի, գրականության նկատմամբ սիրո և հոգատար վերաբերմունքի ձևավորում
6. աշակերտների մեջ հայրենասիրական, մարդասիրական, բարոյական բարձր գաղափարների պատվաստում
7. անձի ձևավորում, բարոյակամային հատկանիշների դաստիարակում,
8. հաղորդակցական կարողությունների մշակում
9. գրական բառապաշարի և բարեկիրթ խոսքի ձևավորում
10. կարդացածի վերարտադրում
11. հայ և արտասահմանյան մանկագիրների ստեղծագործությունների ծանոթացում:

Քանի որ դպրոցը աճող համակարգ է, պահանջները կարող են փոփոխությունների ենթարկվել, բայց վերոնշվածները այն հիմնական պահանջներից են, որ մնում են գրեթե անփոփոխ:

# ԳԼՈՒԽ 2. Արտադասարանական ընթերցանության ուսուցման դասի նմուշ-օրինակ

| Ամսաթիվ | 2023թ |
|---|---|
| Դասարան | 5-րդ |
| Ուսուցիչ | Արմինե Գաբրիելյան |
| Առարկա | Մայրենի |
| Թեման (օրվա կամ շաբաթվա) | Արտադասարանային ընթերցանություն. Առակի ընթերցում (Հ. Ամիրյանի «Թագավո՞ր, թե՞ ստրուկ» գրքից) |
| Հիմնական հասկացություն | Ընթերցանություն |
| Ենթահասկացություն | Տեքստի տրամաբանություն |
| Խաչվող կամ ընդհանրական հասկացություն | Պատճառ և հետևանք |
| Միջառարկայական կապեր | Բնագիտություն, ՀԵՊ |
| Ձևավորվող կարողունակություն | Լեզվական կարողունակություն և գրագիտություն |

## Նպատակ

- Խթանել ընթերցասիրությունը
- Ըմբռնել տալ առակի հիմնական գաղափարը
- Զնավորել դեպքերի հետագա ընթացքը կանխագուշակելու կարողություն
- Զարգացնել քննադատական և վերլուծական մտածողությունը

## Վերջնարդյունք

- Ընթերցածը շաղկապի նախորդ գիտելիքների և փորձի հետ
- Պատճառաբանված դատողություն անի ենթատեքստում թաքնված ասելիքի վերաբերյալ
- Կանխագուշակի դեպքերի զարգացման հետագա ընթացքը

## Անհրաժեշտ նյութեր

- Հ. Ամիրյանի «Թագավո՞ր, թե՞ ստրուկ» գիրքը
- Կանխագուշակման աղյուսակի ձևաթուղթ
- Նկար
- Անհատական թերթիկներ

### ԽԻԿ համակարգում կիրառվող մեթոդներ

1. Խթանում - Մտագրոհ
2. Իմաստավորում - ընթերցանություն «Կանխագուշակման աղյուսակ» մեթոդով
3. Կշռադատում- Խորանարդում մեթոդով

### Փուլ 1-ին

Կազմակերպչական պահ (ներկա-բացակա, անհրաժեշտ նյութերի, պարագաների առկայությունը). նշումներ մատյանում:

**Փուլ 2**

Խթանում- Կիրառվում է ՄՏԱԳՐՈՒՀ մեթոդը նկարի շուրջ

Հարց- Նկարից ելնելով՝ գուշակե՛ք՝ ինչի՞ շուրջ է լինելու մեր այսօրվա թեման: /Հուշում՝ նյութը աղերսներ ունի նախորդող և հաջորդող թեմաների հետ/:

Հնչող պատասխանները ուսուցիչը կամ աշակերտներից մեկը գրառում են :

**Փուլ 3-րդ**

| Ի՞նչ է լինելու | Ի՞նչ փաստեր ունեմ |
|---|---|
| | |

Իմաստավորում- Կիրառվում է կանխագուշակման աղյուսակ մեթոդը: Աշակերտները հերթով հատված առ հատված կարդում են տեքստը, ուսուցչի հրահանգով դադար են տալիս և լրացնում են աղյուսակի համապատասխան սյունակները: Ապա կարդում են իրենց կանխատեսումները:

Շատ հին ժամանակներում մի ծերունի կար: Նա հին տաճարում էր ապրում:

Երեխաները հաճախ էին գալիս տաճարի մոտ խաղալու: Ամենաչարաճճին Տարո անունով մի տղա էր, նա անխնա փչացնում էր ամեն ինչ: Մի անգամ, երբ նա խաղում էր տաճարի աստիճաններին, երեք թռչուն թռչելով եկան նրա մոտ և սկսեցին խոսել, թե ինչն է ամենակարևորն աշխարհում: Ճնճղուկներից մեկն ասաց.

- Աշխարհում մեծագույն բանը …/դադար/
- Աշխարհում մեծագույն բանը արևն է: Արևի շնորհիվ մեր աշխարհն այնքան սքանչելի է: Բայց մարդիկ վարժվել են նրա լույսին, և արևն ընկալում են որպես սովորական մի բան:

Դա լսելով՝ երկրորդ ճնճղուկն ասաց.

- Ո՛չ: Աշխարհում մեծագույն բանը…/դադար/
- Ո՛չ: Աշխարհում մեծագույն բանը ջուրն է: Առանց ջրի կյանք չկա: Բայց մարդիկ այնքան են վարժվել նրա մատչելիությանը, որ արժանին չեն մատուցում ջրին:

Վերջապես երրորդ ճնճղուկը նույնպես խոսեց.

Այն, ինչ դուք ասացիք, ճշմարիտ է: Ե՛վ արևը, և՛ ջուրը սքանչելի պարգևներ են: Բայց երկրի երեսին ամենաարժեքավոր բանը, որի մասին մարդիկ նույնիսկ չեն էլ մտածում, որի առատաձեռնությունը նույնիսկ չեն էլ նկատում…/դադար/

- Այն, ինչ դուք ասացիք, ճշմարիտ է: Ե՛վ արևը, և՛ ջուրը սքանչելի պարգևներ են: Բայց երկրի երեսին ամենաարժեքավոր բանը, որի մասին մարդիկ նույնիսկ չեն էլ մտածում, որի առատաձեռնությունը նույնիսկ չեն էլ նկատում, օդն է: Առանց օդի մենք կզոհվենք:

Ճնճղուկների զրույցը լսելով՝ Տարոն սկսեց մտածել: Նա իրեն երբեք երախտապարտ չէր զգացել ո՛չ օդին, ո՛չ ջրին , ո՛չ էլ արևին…Տղան վազեց ծերունու մոտ և պատմեց իր լսածի մասին: Նա տխրել էր այն բանից, որ փոքրիկ ճնճղուկները մարդկանցից ավելի իմաստուն են:

Ծերունին քնքշորեն ժպտաց և ասաց.

/Ի՞նչ կասեիք դուք, եթե լինեիք ծերունու փոխարեն/

- Ես քեզ շնորհավորում եմ մեծ հայտնագործության համար: Դու իրավացի ես: Մարդիկ իրենց տեսադաշտից բաց են թողել կյանքում ամենից կարևորը, բայց նրանց բոլոր սխալները կարելի է ներել, եթե նրանք Սեր սովորեն: Մարդկանց մեջ արատներ կան, բայց դրանցից ազատվել հնարավոր չէ, նույնիսկ եթե ամբողջ կամքդ բռիդ մեջ հավաքես:

Արատներն արտաքսելու համար Տիեզերքը մարդկանց Սեր է տվել: Միայն Սերը և նրա խորհրդավոր ուժն են թույլ տալիս մարդկանց աստվածային արարման գագաթնակետը մնալ: միայն Սիրո մեջ կա զարգացում, միայն Սիրո մեջ կա ինքնակատարելագործում:

Սիրո շնորհիվ մարդիկ ներում են միմյանց, ընկալում են միմյանց և սքանչելի աշխարհ են արարում:

Փորձեք գուշակել վերնագիրը:

**Փուլ 4-րդ**

Կշռադատում- Կիրառվում է Խորանարդում մեթոդը: Աշակերտները խորանարդի թվին համապատասխան առաջադրանքներ են ստանում, անհատապես պատասխանում դրանց (տրվում է 5 րոպե): Ապա կարդում են գրառումները: Կարևոր է խրախուսել աշակերտների մտքի և երևակայության աշխատանքը, կանխատեսելու կարողության և երևակայության զարգացումը:

1.Ինչո՞ւ են Տիեզերք և Սեր բառերը մեծատառով գրված: Բերե՛ք նմանատիպ օրինակներ:

2. Ի՞նչ 3 բան դուք կավելացնեք կարևորների այս շարքին:

4.<<Մարդկանց մեջ արատներ կան, բայց դրանցից ազատվել հնարավոր չէ, նույնիսկ եթե ամբողջ կամքդ բռիդ մեջ հավաքես>>: Համաձա՞յն եք այս ձևակերպման հետ, թե՞ դուք ձեզ կամքից ուժեղ մարդ եք համարում:

5. Ո՞րն է պատճառը, որ մենք շնորհակալ չենք լինում այն ամենի համար, ինչը մեզ հեշտությամբ է տրվում:

6. Ի՞նչ երկխոսություն կծավալվեր այս ստեղծագործության փոքրիկի և Եզոպոսի <<Ուղևորներն ու սոսին>> առակի հերոսների միջև նախքան թռչուններին հանդիպելը և հետո:

3.Ինչպե՞ս կմեկնաբանեք հետևյալ արտահայտությունը՝ <<Սիրո մեջ կա ինքնակատարելագործում>>:

**Փուլ 5-րդ**

Անդրադարձ կամ ամփոփում: Կիրառվում է Վառ կետի մեթոդը:

Ո՞րն էր ձեզ համար այսօրվա դասի ամենավառ կետը, ի՞նչ գույնով կնշեիք, ինչո՞ւ:

**Փուլ 6-րդ**

Տնային առաջադրանք:

Ուսուցիչը բաժանում է անհատապես կազմած թերթիկներ, բացատրում աշխատանքի բնույթը:

1.Ինչպիսի՞ փոփոխություններ դուք պետք է անեք, որ կարողանաք կառավարել ձեր թերությունները:

2. Եթե դուք անձամբ կարողանայիք արտահայտել ձեր երախտագիտությունը, ո՞ւմ կասեիք, ի՞նչ կասեիք:

3. Թռչունների մասին տեղեկություններ հավաքել, նկարել դրանցից մեկին /ԿԱՊԿՈՒ սովորող/ նշել՝ ինչի խորհրդանիշներ են ձեր մատնանշած թռչունները:

4. Գրել << Կյանքից էլ թանկ>> վերնագրով փոքրիկ շարադրություն:

5. Ի՞նչ ընդհանրություններ և տարբերություններ կմատնանշեք թռչունների և մարդկանց միջև:

# Եզրակացություն

Արտադասարանական ընթերցանությունը մեծապես նպաստում է մայրենիից աշակերտների ձեռք բերած գիտելիքների ամրակայմանը, հարստացմանն ու գործնական կիրառմանը, ընդլայնում է նրանց մտահորիզոնը, զարգացնում ինքնուրույնությունը, նախաձեռնությունը, ձիրքերն ու հակումները,բավարարում հետաքրքրություններն ու հարցասիրությունները: Արտադասարանական ընթերցանության ժամանակ հանձնարարվում են այնպիսի գրական երկեր, որոնք կարևոր նշանակություն ունեն դպրոցականների գաղափարական գեղագիտական դաստիարակման ու առհասարակ նրանց գրական ու ընդհանուր մտահորիզոնի ընդլայնման համար: Արտադասարանային ընթերցանության համար հանձնարարվող գրքերն[3] իրենց բնույթով ու բովանդակությամբ պետք է համապատասխանեն ծրագրային հիմնական երկերին և նպաստեն դրանց հաստատուն ուսումնասիրմանը: Եվ վստահ եղեք, որ մի օր համացանցով տարված ու համակարգչային խաղերում իրենց ժամանակը վատնող երեխաները կգտնեն իրենց հետաքրքրող գիրքն ու կգնան իրենց հերոսի հետևից: Ու կդառնան իրենք մի կյանք կոչվող գրքի հերոսներ, ուր կարարեն ու կվայելեն միասին:

[3] https://kznakbnagavar.blogspot.com/p/blog-page_70.html

# Օգտագործված գրականություն


1. Հրաչյա Ամիրյան, «Թագավո՞ր, թե՞ ստրուկ»
2. Յ. Ա. Կոմենսկի, Մեծ դիդակտիկա
3. Наталия Колесникова: От конспекта к диссертации. Учебное пособие по развитию навыков письменной речи